

Կ Ա Ր Ծ Ի Ք

ԱՄԻՐ ՄԵՀԴԻԻ ՉԵՅՂԱՄԻԻ

ԷԹՆՈՆԵԻՄՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ ՊԱՐՄԻՑ ԴԱՍԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՉ (IX-XVI)»

Ժ.02.06 «ԱՄԻԱՅԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԼԵՉՈՒՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱԲ  
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՏԻՃԱՆԻ  
ՀԱՅՏՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ամիր Չեղամիի «Էթնոնիմների իմաստային զարգացումը պարսից դասական գրականության մեջ (IX-XVI)» աշխատանքն իր մեթոդաբանությամբ, խնդրացանկի ընդգրկմամբ, ըստ էության, նոր երևույթ կարելի է համարել հայ արևելագիտական լեզվաբանության մեջ: Հեղինակը, վերլուծելով IX դարի սկզբից մինչև XVI դարի վերջն ընկած ժամանակաշրջանի շուրջ 200 գրական և պատմական տեքստեր, դուրս է բերում և մանրամասն քննության է առնում 72 ցեղանուն՝ տալով դրանց ծագման, իմաստաբանական փոխակերպումների, հարակից նշանակությունների առաջացման, տեղանունների հետ փոխկապակցվածությունների համապարփակ պատկեր:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Շարադրանքը խիստ կառուցվածքայնացված է, առանձնանում է հստակ տրամաբանական հաջորդականությամբ, ակադեմիական կուռ ոճով, հիմնավորումների, հետևությունների և եզրահանգումների գիտական համոզականությամբ:

Ներածության մեջ արդեն հեղինակը, հետ կանգնելով ատենախոսության սեղմագիրը վերարտադրելու վերջին տարիներին ավանդույթ դարձած մոտեցումից, անմիջապես անցնում է հաջորդող ուսումնասիրության հիմնական հասկացությունների ներածմանը, մուտքագրում դրանք՝ գծագրելով վերջինիս շրջարկը, հստակ սահմանելով հետազոտության նպատակը («ատենախոսության նպատակն առաջին հերթին դասական տեքստերում եղած ցեղանունների ցանկի կազմումն է, իսկ հաջորդ քայլում դրանց իմաստային փոփոխությունների քննումը» էջ 9) և հայտագրելով իր մեթոդաբանական մոտեցումները:

Ուշադրություն է գրավում շարադրանքի մակաձևական՝ ինդուկտիվ կազմությունը՝ առաջին գլխում մասնավոր փաստերի վերլուծությունից դեպի երկրորդ գլխում կատարվող ընդհանրացումները: Եթե դրան է հավելենք ներածության վերը նշված մեթոդաբանական հենքը, ապա պետք է փաստենք, որ հեղինակն ընտրել է հետազոտության շարադրանքի շրջանակային կառուցվածք՝ «տեսական դրույթներ – գործնական հետազոտություն – տեսական ընդհանրացում» շրջարկով, ինչն անշուշտ առավելագույնս նպաստում է կոնկրետ փաստական նյութը հետազոտելու և արդյունքները վերլուծելու նպատակադրությանը հասնելուն:

Այնուհետև, առաջին գլխում մեր առջև հայտնվում է ցեղանունների տպավորիչ մի հավաքածու, որում տրվում են պարսից դասական գրականության մեջ օգտագործվող էթնոնիմների բնութագրերը: Միույթ առ միույթ քննության են առնվում վերը նշված 72 ցեղանունները՝ յուրաքանչյուր մեկի մանրամասն բնութագրմամբ թե՛ ծագումնաբանության, թե՛ կազմության, թե՛ պատմական զարգացման ընթացքում ձեռք բերած հարանշանակությունների տեսանկյունից: Հատկանշական է, որ ցեղանունների աղբյուր հանդիսացող տեքստերը ոչ միայն աշխարհագրական կամ պատմագրական, այլ նաև բանաստեղծական բնույթի են: Ներգրավված աղբյուրների բազմազանությունը և բազմակողմանիությունն, ըստ էության, շարադրանքի՝ կոնկրետ ցեղանվան ուսումնասիրությանը վերաբերող յուրաքանչյուր այդպիսի մի բաժին դարձնում է ինքնուրույն փոքրածավ քննություն՝ միկրոհետազոտություն, առանձին մի ուսումնասիրության խտանյութ-պատրաստուկ՝ պարարտ հող ստեղծելով ցեղանունների հետազոտությամբ զբաղվող մասնագետների համար: Պատահական չէ, որ ինքը հեղինակը այդ ոլորտում ուսումնասիրությունները շարունակելու հայտ է ներկայացնում (այսպես, նա նշում է, որ «պարսից պատմական և աշխարհագրական շատ տեքստեր բխում են արաբական տեքստերից ... արաբական տեքստերի համանման հետազոտությունը, ապա դրա համեմատությունը ներկա ատենախոսության հետ, միանշանակ նոր արդյունքների կհանգեցնի: Այս առումով արաբական տեքստերի ուսումնասիրությունը կլինի մեր հետագա աշխատանքը»՝ էջ 121):

Աշխատության երկրորդ գլխում, ինչպես նշվեց, կատարվում է նախորդ գլխում մանրագննված տվյալները ի մի բերելու, ընդհանրացնելով վերլուծելու հաջողված մի փորձ: Եթե նախորդ գլխում ցեղանունները քննվում էին առանձին-առանձին, դասակարգված լինելով այբբենական կարգով, ապա այստեղ դրանց համակազմը քննության է առնվում

հետազոտական մի քանի տեսանկյուններից՝ կառուցվածքային, որտեղ առանձնացվում են դրանց կազմության պարզ և բաղադրյալ եղանակները, և իմաստաբանական, որտեղ քննարկվում են վերջիններիս առաջնային՝ բուն էթնիկ և երկրորդական՝ իմաստափոխված նշանակությունները:

Այսպես, հեղինակն նկատում է, որ «ուսումնասիրության առարկա հանդիսացող ժամանակագրական սահմաններում՝ IX-XVI դդ., որոշ ցեղանուններ իմաստային զարգացման դեռ չեն հասցրել ենթարկվել» (էջ 110), սակայն մյուսները մի քանի պատճառներով ձեռք են բերում նաև հավելյալ նշանակություններ, որոնք որոշ դեպքերում անգամ փոխարինում են դրանց սկզբնական՝ բուն էթնիկական նշանակությունը: Դա, որպես կանոն, ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, տեղի է ունենում հասարակական վերաբերմունքի պատճառով: Որևէ երևույթի նկատմամբ հասարակության, կամ նրա մի շերտի, վերաբերմունքը կարող է բացասական կամ դրական երանգավորում հաղորդել եզրույթի իմաստին» (էջ 111): <եռագա շարադրանքում հեղինակը քննարկում է առանձին ուսումնասիրված ցեղանունների խմբերը հաջորդաբար *պատմալեզվական, գաղափարախոսական, խորհրդանշական և կրոնադավանական* բնույթի իմաստափոխությունների առումներով՝ այստեղ նույնպես դրսևորելով լեզվաբանական վերլուծության տեխնիկային տիրապետելու, պատմալեզվաբանական լայն համատեքստում կողմնորոշվելու մասնագիտական զարգացած կարողություն:

Աշխատանքի հիմնական բացը կապված է հենց վերջինիս գերկառուցվածքայնությունից՝ հստակ բաշխված և մանրամասն համարակալված նյութը, մի կողմից, թույլ տալով դասակարգել բարդ և, որպես կանոն, վերլուծության համար ոչ դյուրին առարկան, մյուս կողմից, ինչ-որ չափով խաթարում է ուսումնասիրության ամբողջական ընկալումը:

Այդուամենայնիվ, գիտական գրականության և աղբյուրների հետ աշխատելու հմուտ եղանակները, հետազոտական հետազոծի՝ կայացած գիտնականին բնորոշ կառուցումը, շարադրանքի կուռ տրամաբանությունը, ոլորտի հասկացություններին և դրանց էությունական բովանդակությանը վարպետորեն տիրապետելը, եզրահանգումների ձևակերպման հստակությունը բերում են այն համոզման, որ ի դեմս Ամիր Չեղամիի գործ ունենք արևելագիտության բնագավառի յուրջ հետազոտողի, որն ի գործ է դնել արդիական բարդ խնդիրներ և արդյունավետորեն լուծել դրանք:

